ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 դեկտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

184
(2850)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՖՖ-Ն ՄՆԱՑ ՄԵՆԱԿ. ԴԵՄ ԵՆ ԲՈԼՈՐԸ



Դեկտեմբերի 23-ին սպասվում է ՀՖՖ նախագահի ընտրությունը. ըստ էութան, սա ընտրություն անվանելն այնքան էլ ճիշտ չէ, քանզի իշխանությունների «այո»-ն ստացած Արմեն Մելիքբեկյանը կվերընտրվի, ու կշարունակվի հայկական ֆուտբոլի գործող ողբալի վիճակը, մինչեւ նա կհեռացվի այդ պաշտոնից: Հատկանշական է, որ Մելիքբեկյանին դեմ են արտահայտվել հայկական թոփ երկու առաջատար ակումբները, 4 ակումբների ֆանատական շարժումները («Ուրարտու», «Փյունիկ», «Արարատ Արմենիա» եւ «Շիրակ»): Ազգային հավաքականի ֆան ակումբներից ամենամեծը (FAF) երեկ, ըստ էութան, քննադատեց Մելիքբեկյանին ու հայտարարեց, որ չի սատարում նրան: «Ուրարտու» եւ «Փյունիկ» ակումբները միասին պահում են ամենամեծ երկու ակադեմիաները եւ ֆուտբոլի հիմնական դարբնոցն են. այս ակումբների սեփականատերերն ամեն ամիս իրենց գրպաններից ծախսում են հարյուր հազարավոր դոլարներ, ու եթե հեռանան, ապա շուրջ 3000 երեխա կզրկվի մարզվելու հնարավորությունից, այդ թվում՝ մարզադաշտերից: ՀՖՖ ներկա ղեկավարին չի սատարում Հայաստանի հավաքականի նախկին խաղացողների մեծագույն մասը, իսկ ով էլ չեզոք է, ըստ հիմնավոր տեղեկությունների, որոշակի հետաքրքրություն ունի այս ֆեդերացիայից: Արմեն Մելիքբեկյանին շաբաթ օրը կընտրեն ՀՖՖ անդամ այն ՀԿ-ները, որոնց ֆեդերացիա են բերել հենց իրենք, ու որոնք ֆինանսապես կախված են իրենցից: Նման ՀԿ-ներն ունեն հավասար մեկ ձայն, ինչպես ոլորտում իրոք եղանակ ստեղծող խոշոր ակումբները, ինչն անտրամաբանական է: Ավելին՝ Մելիքբեկյանին սատարում են այնպիսի ֆուտբոլային ակումբներ, որոնք կամ ակտիվ գործունեություն չեն ծավալում, կամ մեղադրվում են պայմանավորված խաղեր կազմակերպելու համար: Մեր տեղեկություններով՝ Մելիքբեկյանի ընտրվելու դեպքում Բարձրագույն խմբի մի քանի ակումբներ պատրաստվում են դուրս գալ առաջնությունից, իսկ ֆանատական շարժումներն ու ակադեմիաներում մարզվող ծնողներն արդեն խմբեր են ձեւավորել ու պատրաստվում են բողոքի ակցիա իրականացնել ՀՀ կառավարության դիմաց, քանզի վստահ են, որ Արմեն Մելիքբեկյանի ամենաթողությունը գալիս է հենց վարչապետից: Ոլորտի մասնագետները պնդում են, որ նախկին լրագրող Արմեն Մելիքբեկյանին լեգիտիմ նախագահ անվանել չի կարելի, ու որ այս ամենը ծաղր է հայկական ֆուտբոլի ապագայի նկատմամբ, իսկ երկրի բարձրագույն ղեկավարությունը լուռ է:

Հ.Գ. Երեկ Ստեփանակերտի մարզադաշտում Իլհամ Ալիեւն առաջին հարվածը կատարեց գնդակին, ու բռնազավթված Արցախում կայացավ այդ երկրի ֆուտբոլային հանդիպումը: Նման իրավիճակում Հայաստանում գոնե պետք է փրկել ֆուտբոլն ու նրան վերադարձնել նախկին փառքը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի 16.01.2024-ին:

Իշխող ՔՊ կուսակցության նիստերը խիստ գաղտնի ռեժիմով են անցնում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հատկապես վերջին շրջանում իշխանականների համար սահմանափակումները շատացել են: Նախ՝ մինչ նիստը սկսվելը, բոլորին ասվում է, որ պարտադիր հեռախոսներն անջատեն, հանձնեն, ավելորդ իրեր չբերեն իրենց հետ: Բացի սա, կարեւոր հանդիպումներն ու քննարկումները նեղ կազմով են անցնում, ոչ բոլոր ՔՊ-ականներին են տեղեկացնում դրա մասին, որպեսզի արտահոսք չլինի: «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է այս հարցին, որ Նիկոլ Փաշինյանն այլեւս իր թիմակիցներին չի վստահում, նրանցից մի քանիսի հետ է միայն շփվում: ՔՊ գաղտնի ռեժիմով այս նիստերն էլ հենց փաստում են Փաշինյանի անհանգստությունների մասին:

Սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծած պատերազմը դադարեցնելու նպատակով Արցախի իշխանությունները ստիպված եղան ընդունել Ադրբեջանի նախապայմանները՝ Արցախի պատմական տարածքի հանձնում, զինաթափում, ինչն էլ հանգեցրեց հայկական երկրորդ պետության հայաթափմանը: Սեպտեմբերի 28-ին Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը հրամանագիր էր ստորագրել, ըստ որի՝ Արցախի Հանրապետությունը 2024 թվականի հունվարի 1-ից կդադարի գոյություն ունենալ: Նախ՝ արձանագրենք, որ որեւէ պաշտոնյայի ստորագրած հրամանագիր չի կարող լուծարել Արցախը, քանի որ այն ժողովրդի հանրաքվեով ստեղծված ինքնիշխան պետություն է՝ իր պետական կառույցներով ու ատրիբուտներով: Սամվել Շահրամանյանն ինքն էլ հայտարարել է, որ որեւէ փաստաթուղթ չի կարող լուծարել ժողովրդի ստեղծած պետությունը՝ այսպիսով նաեւ ուղերձ հղելով, որ իր ստորագրած հրամանագիրն իրավական ուժ չունի: Այս դեպքում, թերեւս, տարօրինակ է՝ ինչու Շահրամանյանն ինքը պաշտոնապես չի հայտարարում, որ չեղարկում է իր ստորագրած հրամանագիրը: Ավելին՝ ինչպես «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրներն են փոխանցում, արդեն իսկ կա այդ՝ իրավական ուժ չունեցող փաստաթղթի չեղարկման հրամանագիր, բայց, չգիտես՝ ինչու, Արցախի կառավարությունը խուսափում է այն հրապարակել: Կարեւոր է նաեւ, որ այդ չեղարկման հրամանագիրը մինչեւ տարեվերջ հրապարակվի, որպեսզի այդ ուղերձը պաշտոնապես տրվի միջազգային հանրությանը: Այսպիսով, Արցախի լուծարման փաստաթղթի՝ ուժի մեջ մտնելուն քիչ ժամանակ է մնացել, իսկ թե ինչպես կվարվի Արցախի կառավարությունը, ժամանակը ցույց կտա:

ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպան Արթուր Ջավադյանը պաշտոնի նշանակվել է 2020 թվականի հունիսի 16-ին՝ վարչապետի որոշմամբ: Ջավադյանը 2022 թվականի հայտարարատու տարում ձեռք է բերել 6 անշարժ գույք, իսկ տարեվերջին անշարժ գույքերի ընդհանուր թիվը կազմել է 14՝ 4 անհատական բնակելի տուն, 7 հողամաս, 1 ավտոտնակ եւ 1 ավտոկայանատեղի, 1 ՀՀ օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված շինություն, որը դեռեւս չի ստացել իրավունքների պետական գրանցում: Անշարժ գույքի մի մասը հենց Ջավադյանն է գնել, իսկ մյուս մասը կամ նվիրատվություն է, կամ ժառանգություն, որ ստացել է հենց 2022 թվականին: Ջավադյանը ոչ միայն անշարժ գույքի քանակով է փայլում, այլ նաեւ վարած մեքենայով: Նա 2020 թվականին գնել է 2019 թվականի արտադրության, Mercedes Benz մակնիշի մեքենա: Հավելենք, որ ոչ բոլոր պաշտոնյաները կարող են իրենց թույլ տալ նման հաճույք՝ վարել նոր մեքենա: Ջավադյանը ժառանգություն է ստացել նաեւ գումարի տեսքով՝ 63 մլն 900 հազար դրամ, որը ստացել է Յուրի Լեւոնի Ջավադյանից: Նա ստացել է եւս 2 մլն 162 հազար դրամ, սակայն ինչ աղբյուրից՝ հայտնի չէ: Հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմել են 45 մլն դրամ: ՀՀ հատուկ հանձնարարությունների դեսպանի բանկային ավանդները կազմել են 112 հազար եվրո եւ 698 հազար ԱՄՆ դոլար: Տվյալ տարվա սկզբում առկա չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող 1 գույք է հայտարարագրել Ջավադյանը. հուշադրամը հանձնվել է դեսպանին, արժեքը 24 մլն դրամ է եղել: ՀՀ կենտրոնական բանկի նախկին նախագահ Ջավադյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 5 հազար ԱՄՆ դոլար, 4 մլն 657 հազար դրամ, 11 հազար եվրո: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 14 հազար ԱՄՆ դոլար, 6 մլն 500 հազար դրամ, 19 հազար եվրո: Ջավադյանի՝ հաշվետու տարվա եկամուտը կազմել է 295 մլն 248 հազար դրամ:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀԱՄԱԽՄԲՎԵՆՔ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԹԵԶՈՎ՝ ՆՈՐ ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱ

ArmLur.am-ի զրուցակիցը ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ, ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանն է:

-Պարոն Սաղաթելյան, Նիկոլ Փաշինյանն օրերս ծավալուն հարցազրույց տվեց՝ խոսելով Արցախի եւ բանակցային գործընթացի մասին: Հետեւե՞լ եք հարցազրույցին, ի՞նչ արձանագրումներ եք արել նրա հայտարարություններից:

-Նիկոլ Փաշինյանը շարունակում է արդարանալ, իր հարցազրույցում նա փորձում էր հանրությանը համոզել ու հերթական անգամ մոլորեցնել, որ այն, ինչ պատահել է մեզ հետ, անխուսափելի էր, ինչն ամբողջությամբ կեղծ է, քանի որ այդ ամենի պատասխանատուն հենց ինքն է: Նիկոլ Փաշինյանը երկու նպատակ ուներ՝ փորձում էր մարսել այն բոլոր հանցագործությունները, որոնք իրականացրել է Արցախի մասով, նաեւ շարունակում էր լեգիտիմացնել Ալիեւի վարած ագրեսիվ քաղաքականությունը եւ Արցախում իրականացրած էթնիկ զտումը: Հասարակությանը փորձում է խաղաղության թեզի տակ նոր կապիտուլյացիայի տանել:

-Իր հարցազրույցում Նիկոլ Փաշինյանն այսպիսի մի հայտարարություն արեց՝ եղել են մարդիկ, ովքեր պլանավորել են Արցախի հայաթափումը եւ այսպիսով նպատակ են ունեցել ոչնչացնել Հայաստանի անկախությունը: Ո՞մ նկատի ուներ նա:

-Արցախի հայաթափումը պլանավորել են Նիկոլ Փաշինյանը եւ Ալիեւը համատեղ: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի ինքնիշխանությանը, Նիկոլ Փաշինյանն այդ ինքնիշխանությունը վաղուց ոչնչացրել է. թշնամու զորքերը գտնվում են Հայաստանի տարածքում, ադրբեջանցի զինծառայողներն այսօր Գեղարքունիքում, Սյունիքում են, ու այս ամենը տեղի է ունեցել այս իշխանության գործունեության ու վարած քաղաքականության արդյունքում:

-Պարոն Սաղաթելյան, վերջին օրերին թեժ խոսակցություններ են նաեւ գնում, որ իշխանությունները մտադիր են 2024 թ.-ին գնալ արտահերթ ընտրությունների. ի՞նչ եք կարծում, կգնա՞ն այդ ճանապարհով իշխանությունները:

-Դա պարզ հարց չէ, խորքային է, բայց չեմ կարծում, որ իրենք կգնան այդ ճանապարհով՝ նկատի ունենալով թե՛ սոցիալ-տնտեսական կանխատեսումները, որոնք սպասվում են մեր երկրում, ինչպես նաեւ աշխարհաքաղաքական դասավորությունները, նաեւ մի շարք այլ հանգամանքներ: Բացառված սցենար չէ, որ փորձեն նոր ընտրությունների գնալ՝ հույս ունենալով, որ այդ ճանապարհով կվերարտադրվեն:

-Իսկ ընդդիմությունը պատրա՞ստ է նոր ընտրությունների:

-Սա ինչ-որ տեղ նաեւ արհեստական օրակարգ է բոլոր հարցերն ու խնդիրներն այլ ուղղությամբ տանելու համար, հետեւաբար ավելի առաջնային խնդիրներ կան, այս պահին պետք է կենտրոնանալ դրանց վրա:

-Պարո՛ն Սաղաթելյան, ընդդիմությունը թե՛ խորհրդարանում, թե՛ փողոցում շատ պասիվ է, միայն հայտարարություններ են հնչում առկա վտանգների ու քայլերի մասին, բայց կանխարգելիչ քայլեր չեն ձեռնարկվում:

-Վերջին շրջանում, տեսել եք, ինչ ակտիվ գործունեություն է ծավալում ընդդիմությունը՝ սկսած անվտանգային, սոցիալ-տնտեսական եւ Արցախի հետ կապված հարցերից. բոլոր խնդիրները բարձրաձայնվում են, սուր քննադատություններ են հնչեցվում՝ փորձելով ժողովրդին ներկայացնել իշխանության ղեկին հայտնվածների վարած քաղաքականությունը: Զուգահեռ մենք գրեթե ամեն շաբաթ այցելում ենք տարբեր մարզեր՝ Սյունիք, Գեղարքունիք. վերջին մեկ ամսվա ընթացքում իմ գործընկերների հետ 7-8 մարզերում եղել ենք, հանդիպել ենք այնտեղի բնակչությանը, խոսել խնդիրների մասին: Այս պահին մեր խնդիրը ամենօրյա աշխատանքն է ժողովրդի հետ, որպեսզի նրանց բացատրենք այս իշխանությունների վարած կործանարար քաղաքականության հետեւանքները եւ համախմբենք մարդկանց ազգային օրակարգի շուրջ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՋԱՏՎԵ՞Լ Է

ՎԱ՞ՐԴ, ԹԵ՞ ՄԵԽԱԿ ՏԵՍԱԿԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Մամուլում պարբերաբար լուրեր են շրջանառվում, որ Նիկոլ Փաշինյանն աշխատանքից ազատել է վարչապետի աշխատակազմի արարողակարգի բաժնի պետ Մանվել Ավետիսյանին:

Մանվել Ավետիսյանը վարչապետի աշխատակազմի արարողակարգի բաժինը ղեկավարել է նաեւ 2018-2020 թվականներին: Հիշեցնենք, որ 2019թ.-ին էլ Նիկոլ Փաշինյանը վարչապետի արարողակարգի պատասխանատու Ալեքսանդր Մխիթարյանին էր պաշտոնից ազատել, որը մոտ մեկ տարի էր պաշտոնավարել: 2019թ. մայիսի 14-ին 168.am-ը հոդված էր հրապարակել, որում անդրադարձ է կատարվել նաեւ Ալեքսանդր Մխիթարյանին պաշտոնից ազատելու պատճառներին: Ըստ լրատվականի՝ Ալեքսանդր Մխիթարյանն աշխատանքից ազատվել է ծաղիկների պատճառով: Համաձայն այդ հրապարակման՝ 2019թ.-ի ապրիլի 2-ի առավոտյան Նիկոլ Փաշինյանն ԱԺ այդ ժամանակվա նախագահ Արարատ Միրզոյանի, իշխանական պատգամավորների, ՀՀ ՊՆ եւ ՋՈՒ բարձրաստիճան ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու 2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ զոհված հերոսների եւ արցախյան ազատամարտում իրենց կյանքը զոհաբերած հերոսների հիշատակին: Արարողակարգով որոշվել էր, որ Փաշինյանը եւ մյուսները, ի հիշատակ զոհված հերոսների, մեխակներ պետք է դնեն նրանց շիրիմներին: Նույն օրը «Եռաբլուր» զինվորական պանթեոն հարգանքի տուրք մատուցելու է գնում ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը: «Հեղափոխական» կառավարության աշխատակազմում նկատում են, որ Սերժ Սարգսյանը վարդ տեսակի ծաղիկներ է տեղադրում զոհերի շիրիմներին: Այս հանգամանքը խիստ զայրացնում է Նիկոլ Փաշինյանին՝թե ինչու է Սերժ Սարգսյանը վարդեր տանում, իսկ ինքը՝ մեխակներ: Օրվա վերջում արդեն Նիկոլ Փաշինյանը ստորագրում է Ալեքսանդր Մխիթարյանին պաշտոնից ազատելու հրամանը: 2020 թվականին վարչապետի աշխատակազմի արարողակարգի բաժնի պետ է նշանակվում Էդուարդ Հարությունյանը, որն աշխատանքից ազատվել է 2021թ.-ի սեպտեմբերին: Այդ ժամանակից սկսած՝ արարողակարգի բաժնի պետի պարտականությունները կատարում էր բաժնի պատասխանատու Սուրեն Վարոսյանը: Մանվել Ավետիսյանը սեպտեմբերի 24-ին է երկրորդ անգամ նշանակվել արարողակարգի բաժնի պետի պաշտոնին: Նրան պաշտոնից ազատելու մասին տեղեկության իսկությունն իմանալու համար ArmLur.am-ը կապ է հաստատել վարչապետի մամուլի խոսնակ Նազելի Բաղդասարյանի հետ, սակայն վերջինս չմեկնաբանեց՝ուղղորդելով վարչապետի աշխատակազմ: Վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմեն Խաչատրյանն էլ, մեր հարցին ի պատասխան, ասաց. «Վարչապետի որոշումները հրապարակվում են. այլ տեղեկություն չունեմ»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԳԱԴՐԱԳԻՐ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը դեկտեմբերի 20-ին կարգադրություն է ստորագրել, որտեղ ասվում է. «Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով՝ կարգադրում եմ՝

1. Կազմակերպել 2023 թվականի դեկտեմբերի 21-22-ը Հայաստանի Հանրապետություն (ք. Դիլիջան) ժամանող՝ Վրաստանի Խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի գլխավորած պատվիրակության ընդունելությունը:

2. Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ՝ պատվիրակության ընդունելությունը կազմակերպել Ազգային ժողովի նախագահի 2018 թվականի հունվարի 25-ի «Ներկայացուցչական ծախսերի իրականացման եւ հուշաներների տրամադրման կարգի մասին» Կ-22-Ա կարգադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին»:

ՅՈԹ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Armlur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն առավոտյան ձերբակալել է Քաղաքաշինության եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 7 աշխատակիցների, որոնք կասկածվում են կոռուպցիոն մեխանիզմի մեջ լինելու համար: Ըստ աղբյուրների՝ բացահայտվել են նոր կառուցված շենքերի ավարտական ակտի տակ տեսչական մարմնի կողմից տրված դրական եզրակացության կնիք եւ ստորագրություն, այնինչ տվյալ ավարտական ակտի փաստաթղթերը տեսչական մարմին կամ մուտք չեն եղել, կամ տրվել է բացասական եզրակացություն: Տեսչական մարմնի մեր աղբյուրները փոխանցում են, որ կնիքը ղեկավարի մոտ է միայն, ու, բացի իրենից, ոչ մեկ չի կարող փաստաթղթեր կնքել եւ ուղարկել, սակայն ձերբակալել են սովորական աշխատակիցների:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄ ԿԱ

Անդրկովկասում իրավիճակը շարունակում է լարված մնալ, սակայն կայունացման հստակ միտում կա:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս մասին երեկ՝ Մոսկվայում ճեպազրույցի ժամանակ, հայտարարել է ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, բանակի գեներալ Վալերի Գերասիմովը:

«Ռուսաստանի Դաշնությունը քաղաքական ոլորտում նպատակաուղղված աշխատանք է տանում Անդրկովկասում տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման, Բաքվի եւ Երեւանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրման, ինչպես նաեւ հայ-ադրբեջանական ամենասուր հակասությունների լուծման ուղղությամբ»,- ասել է Գերասիմովը:

ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ

«Ռուս խաղաղապահները սեպտեմբերին՝ Լեռնային Ղարաբաղում հակամարտության ընթացքում, իրենց տեղակայման վայրերում տեղավորել են ավելի քան 10 հազար խաղաղ բնակիչների, այնուհետ՝ ապահովել Ղարաբաղի գրեթե ողջ բնակչության անվտանգ մեկնումը Հայաստան»,- ասել է ՌԴ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, բանակի գեներալ Վալերի Գերասիմովը: «Ռազմական գործողությունների ընթացքում ռուսական խաղաղապահ զորախումբն ապահովել է ավելի քան 10 հազար խաղաղ բնակչի տեղակայումը իրենց տեղակայման վայրերում, հետո՝ Ղարաբաղի գրեթե ողջ բնակչության անվտանգ ելքը Հայաստանի տարածք: Գրեթե 300 միրավոր է տեղափոխվել:

«Միեւնույն ժամանակ, մեր զինվորականները շարունակում են առաջադրանքներ կատարել՝ որպես խաղաղ կյանք կառուցելու հնարավորության եւ տարածաշրջան բնակիչների վերադարձի երաշխավոր»,- ասել է Գերասիմովը օտարերկրյա ռազմական կցորդների համար ճեպազրույցում:

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել էին, որ դեկտեմբերի 19-ին ամփոփել են ՀՀ, ք. Երեւան, Արշակունյաց 4/1 հասցեում գտնվող գույքի օտարման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքները: Հայտարարված մրցույթին ներկայացվել է 1 հայտ: Հանձնաժողովի որոշմամբ՝ ներկայացված առաջարկության ամփոփման արդյունքում մրցույթի հաղթող է ճանաչվել միակ հայտատու «ԷՌ ԷՆ ԷՍ ԱՐԾ» ՍՊԸ-ն: Ըստ ներկայացրած ներդրումային ծրագրի՝ ընկերությունը պարտավորվել է Արշակունյաց 4/1 հասցեում գտնվող գույքի օտարման նպատակով 5 տարիների ընթացքում վճարել 25 մլրդ ՀՀ դրամ (հավասարաչափ) եւ կատարել 26 մլրդ ՀՀ դրամի ներդրում՝ տարածքում պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրված շենքերի վերանորոգման, նոր բնակելի, հյուրանոցային համալիրների, կոմերցիոն տարածքների, զբոսայգիների եւ հանգստի վայրերի կառուցման նպատակով: Նշենք, որ խոսքը Երեւանի «Մայրաքաղաքային գնդի» զորամասի տարածքի մասին է, որը երկար ժամանակ չէր շահագործվում:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀԱՌՈՒՆ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՆ Է

ՀՀ կառավարությունը երեկվա նիստի ժամանակ սահմանեց պետական աջակցություն տրամադրել վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն ստացած՝ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ծնողին մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքն իր բնակության վայրում չհաշվառված անձի՝ դայակի կամ վճարովի հիմունքներով գործող նախադպրոցական հաստատության միջոցով կազմակերպելու հարցում:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը նշեց, որ շահառուի՝ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու համար զոհված զինծառայողի ծնողի եւ միասնական սոցծառայության տարածքային կենտրոնի միջեւ կկնքվի աջակցության տրամադրման պայմանագիր, եւ ծնողը հնարավորություն կունենա մինչեւ երեխայի մանկապարտեզ գնալը դայակ ունենալ: Այդ նպատակով կտրամադրվի մինչեւ 104 հազար դրամ գումար:

Առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանն էլ տեղեկացրեց, որ զոհված զինծառայողների ընտանիքներում, 2021թ. սկսած, արդեն 54 երեխա է ծնվել:

Մկրտչյանը հավելեց, որ այս ծրագրով չպետք է դայակը նույն հասցեում հաշվառված լինի. «Նախորդ ծրագրում լինում էին դեպքեր, երբ գրանցում էին ընտանիքի անդամին, եւ ծրագիրը չէր ծառայում իր նպատակին»:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, սակայն, նախարարի այս դիտարկումը այդքան էլ ճիշտ չհամարեց: Ըստ նրա՝ նման սահմանափակումներով շեղվում են հիմնական նպատակից:

«Կարծում եմ՝ այս դեպքում մենք կարող ենք այդ բացառությունն անել. մեր շահառուն, որին ուզում ենք աջակցել, ի վերջո, ծնված երեխան է. ինչքան լավ պահեն այդ երեխային, այդքան մեզ համար ավելի լավ: Ամեն անգամ՝ մեր քաղաքականությունը մշակելիս, կարեւոր բաներ բաց ենք թողում: Մեր խնդիրը երեխային օգնելն է, այս ծրագրով ինչ-որ տեղ գործազուրկ դայակներ կա՞ն, ուզո՞ւմ ենք իրենց աշխատանքի տեղավորենք. դա չէ մեր խնդիրը: Եթե այդ ծառայությունը պետք է հարազատ տատիկը մատուցի, շատ լավ, թող մատուցի, ավելի լավ: Մեր խնդիրն այն է, որ երեխան լավ պայմաններում լինի, եւ մայրիկները աշխատելու հնարավորություն ունենան»,- ասաց նա:

Այնուհետեւ վարչապետը կառավարության անդամներին մի իրավիճակ ներկայացրեց. «Ընտանիքում ծնվել է երեխա, եւ երիտասարդ մայրն ուզում է աշխատի, եւ երեխայի տատիկը մի տեղ աշխատում է 80 հազար դրամով. ուզենալով օգնի, որպեսզի իր դուստրը կամ հարսը աշխատելու հնարավորություն ունենա՝ մարդը կարող է որոշի ու դուրս գա աշխատանքից, գնա իր թոռնիկին պահի եւ իր եկամուտն էլ չկորցնի. այդ թափուր մնացած աշխատանքի վայրում մեկ ուրիշն աշխատի: Սա այն դեպքը չէ, որ պետք է կասկածելի հայացքով ասենք՝ վա՛յ, մեր դայակների 100 հազար դրամը ի՞նչ եղավ»:

Նիկոլ Փաշինյանը փաստեց՝ սահմանափակումների հետեւանքով մարդիկ չեն կարողանում օգտվել նախագծից. «Մենք երբեւէ չենք խորանում որոշումների մեջ, այլ ասում ենք՝ տեսե՛ք, մենք ինչ լավ կառավարություն ենք, նման որոշում ընդունեցինք, հետո գնում ենք մարզային հանդիպման, հարցնում՝ օգտվո՞ւմ եք այդ ծառայությունից, ասում են՝ չէ, որովհետեւ մեր բարեկամը, հարեւանը կամ գյուղացին չի կարող մասնակցել, կամ դայակի բոյը պետք է լինի 1.90, քաշը՝ էսքան, 5 աշխատանքային փորձով, բայց հանրապետությունում նման մարդ չկա: Ես գիտեմ, որ մարզային կամ ոչ մարզային որեւէ այցի լայն ժպիտով գնալու եմ հարցնեմ՝ բա էդ որոշումից օգտվեցի՞ք, սիրելի՛ շահառուներ, եւ ինձ ոչ ժպիտով պատասխանեն՝ ոչ: Ինչո՞ւ. որովհետեւ ձեր կարգավորման մեջ մի հատ հնարավորություն կա, 200 հատ սահմանափակում, մենք նեռվ չունենք դա հաղթահարենք. ես առավոտից դա եմ մտածում: Սա առիթ է, որ որոշումներ կայացնելիս հասկանանք՝ մարդը օգտվո՞ւմ է դրանից: Որոշումները մենակ զեկույցներում գրելու համար չենք ընդունում, այլ մարդկանց կյանքը լավացնելու»:

Կառավարության ղեկավարը նաեւ կատակեց. «Երեխային պահելու մեջ սահմանափակումը չեմ հասկանում. եթե չպահի տատիկը, կազատե՞ն աշխատանքից: Մայրիկներին դրանով լծակ ենք տալիս, որ ասեն՝ հարգելի՛ տատիկ, Դուք երկուշաբթի օրվանից ազատված եք աշխատանքից»:

Նա հանձնարարեց լուծել նշված կարգավորումը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Միջազգային ճգնաժամային խմբի նախագահ Կոմֆորտ Էրոյին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ զրուցակիցները քննարկել են տարածաշրջանային իրավիճակին վերաբերող հարցեր:

«Անդրադարձ է կատարվել Հարավային Կովկասում կայունության ու տեւական խաղաղության հաստատման հնարավորություններին, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացին ու վերջին զարգացումներին:

Վարչապետ Փաշինյանը ներկայացրել է հայկական կողմի դիրքորոշումները, այդ թվում՝ խաղաղության պայմանագրի սկզբունքների վերաբերյալ»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ մտքեր են փոխանակվել Ադրբեջանի կողմից էթնիկ զտման հետեւանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հումանիտար խնդիրների, դրանց լուծման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերի շուրջ: Երկուստեք կարեւորվել է միջազգային հանրության աջակցությունը:

ԱԽ ՆԻՍՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի նիստ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նիստին, բացի ԱԽ անդամներից, մասնակցել են նաեւ հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը:

Ըստ աղբյուրի՝ նիստի ընթացքում քննարկվել են Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորմանը, ՀՀ պարենային անվտանգության ապահովմանը, ՀՀ ԶՈՒ միասնական կառավարման ավտոմատացված համակարգին եւ ՀՀ անվտանգությանն առնչվող այլ հարցեր:

Նշվում է, որ զեկույցներով հանդես են եկել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը եւ այլ պաշտոնյաներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝ ԿԱԼԱՆՔ

Ավարտվել է Գորիս քաղաքում Տիգրան Խաչատրյանի կողմից հրազենի գործադրմամբ խուլիգանություն կատարելու եւ խուլիգանական դրդումներով մեկ անձի մարմնական վնասվածք հասցնելու դեպքի առթիվ ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային ճնշական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը. այս մասին հայտնում են ՔԿ-ից:

«ՀՀ քննչական կոմիտեն ավելի վաղ տեղեկացրել էր, որ 2023թ. հունիսի 19-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Տ. Խաչատրյանն իրեն պատկանող Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենայով, երկու մտերիմների հետ գնացել է Գորիս քաղաքում գործող ավտոտեխսպասարկման կետ մինչ այդ ավտոմեքենայի համար անվադողեր գնելու հարցի շուրջ հեռախոսային խոսակցության ընթացքում ծագած վիճաբանության կապակցությամբ պարզաբանումներ կատարելու նպատակով:

Անվադողերի վաճառքով զբաղվող՝ Գորիս քաղաքի 46-ամյա բնակչի հետ պարզաբանումներ կատարելու ընթացքում, ենչին առիթն օգտագործելով, իր սեփական անձի առավելություններն ընդգծելու եւ այդկերպ հանդուգն վարքագիծ դրսեւորելու մոլուցքով տարված, խուլիգանական դրդումներով նա վիճաբանություն էր հրահրել ավտոտեխսպասարկման կետի աշխատակիցների հետ, նրանց հասցեին հնչեցրել սեռական բնույթի հայհոյանքներ: Այնուհետեւ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, ավտոտեխսպասարկման կետի հարեւանությամբ գտնվող քաղաքացիների, թաղամասի բնակիչների, սպասարկման կետերի անդորրը խախտելով, իր մոտ ապօրինի կրած հրազենով կրակոց էր արձակել 46-ամյա տղամարդու ուղղությամբ՝ վերջինիս պատճառելով առողջության միջին ծանրության վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածք, եւ հեռացել դեպքի վայրից՝ թաքնվելով նաեւ քննությունից:

Վերջինս հետագայում հայտնաբերվել էր Երեւան քաղաքում եւ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Տ. Խաչատրյանին վերջնական մեղադրանք էր ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով, 167-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ եւ 12-րդ կետերով, 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Քննիչը միջնորդություն էր ներկայացրել դատարան՝ հաստատելու վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը, ինչը դատարանի որոշմամբ բավարարվել էր, եւ Տ. Խաչատրյանը կալանավորվել էր:

Վարույթի նյութերն ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Հավելենք նաեւ, որ վարույթով տուժող՝ Գորիս քաղաքի 46-ամյա բնակիչը, զգուշացված լինելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ ցուցմունք տալու, ինչպես նաեւ 218-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ հարցերին ճշմարտացի պատասխանելու պարտականություն ունենալու մասին, չհանդիսանալով իր, ամուսնու, մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալու պարտականություն չունեցող անձ, ապօրինի հրաժարվել է Տ. Խաչատրյանի կողմից կատարված միջին ծանրության եւ ծանր հանցագործությունների դեպքերի առնչությամբ իրեն հայտնի հանգամանքների մասին ցուցմունք տալ:

Նշված փաստի առթիվ նախաձեռնված առանձին վարույթի շրջանակներում որոշում է կայացվել 46-ամյա անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, եւ նրան ներկայացվել է մեղադրանք:

Այս մասով նախաքննությունը շարունակվում է»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹՅԱՄԲ

«Շատ իրավացի եւ ճիշտ գործ եք մեջբերում»,-երեկ Հանրային հեռուստաընկերության տաղավարում ասել է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը՝ արձագանքելով հաղորդավար Պետրոս Ղազարյանի այն դիտարկմանը, որ, օրինակ, Գագիկ Խաչատրյանի գործը, որը 2020 թվականի օգոստոսի 14-ից սկսվել է, եւ հիմա, որ արդեն 2023 թվականն է ավարտվում, կարծես ոչինչ չի փոխվել:

Վարդապետյանը նկատել է, որ հենց այդ պատճառով էլ բոլորովին վերջերս դատախազությունը ստիպված միջնորդություն է ներկայացրել՝ իրավունքի չարաշահման հիմքով Գագիկ Խաչատրյանի նկատմամբ խափանման միջոցը փոխելու պահանջով: Գլխավոր դատախազի խոսքով՝ դատարանը մերժել է դատախազության պահանջը, որը պատրաստվում են բողոքարկել:

«Վերջին ութ ամիսների ընթացքում 14 դատական նիստ է տեղի ունեցել, 12 դատական նիստ չի կայացել Գագիկ Խաչատրյանի առողջության վատթարացման պատճառաբանությամբ: Մեզ համար անհասկանալի զուգադիպությամբ Գագիկ Խաչատրյանի առողջությունը վատթարանում է նիստից մեկ օր առաջ: Մինչ այդ ամբողջ ընթացքում չի եղել որեւէ տվյալ, որ Գագիկ Խաչատրյանը, օրինակ, ստացիոնար բուժման մեջ է գտնվել: Գտնվել է իր տանը, նիստից առաջ վատ է զգացել, կամ գալիս է դատարան, նիստը բացում են, Գագիկ Խաչատրյանը լավ չի զգում եւ, օրինակ, գնում է սանհանգույց, եւ 20 րոպե հետո պարզվում է, որ Գագիկ Խաչատրյանը չի կարող ներկայանալ նիստերի դահլիճ,- ասել է Վարդապետյանը եւ հավելել:- Ընդամենը մնացել է մի քանի նիստի աշխատանք, որ պետք է դատախազությունն իրականացնի, մեկ անձի հարցաքննություն, եւ արդեն ավարտական փուլն է: Մենք դեռեւս չենք կարող բովանդակային դատաքննության անցնել. դա է պատճառը, որ նման ծայրահեղ քայլի ենք գնում եւ կարծում ենք, որ գոնե խափանման միջոցի փոփոխությունը այս իրավունքի չարաշահման գործընթացը կկասեցնի, եւ գոնե շահագրգռված կլինեն, որպեսզի մենք բովանդակային երկու, երեք նիստ անենք եւ ավարտենք»:

Խոսելով վերջինիս որդիների մասին՝ գլխավոր դատախազն ասել է, որ մեկ շաբաթ առաջ մեղադրական եզրակացությունը դատախազը հաստատել է եւ ուղարկել դատարան. «Ամենամեծ կտորը մեղադրանքի վերաբերում է մոտավորապես 115 միլիոն ԱՄՆ դոլարի փողերի լվացմանը: Այս պահին որպես մեղադրյալ, ի թիվս այլոց, անցնում են Գագիկ Խաչատրյանի կրտսեր որդին՝ Արտյոմ Խաչատրյանը, եւ եղբորորդին՝ Արամ Խաչատրյանը, ավագ որդին՝ Գուրգենը, դեռեւս գտնվում է հետախուզման մեջ»:

Նա նաեւ նշել է. «Մենք էլի ակնկալում ենք, որ դատարանը հետեւողական նիստեր կնշանակի եւ հնարավորություն կտա մեղադրանքի կողմի հրապարակային դատաքննության շրջանակներում ներկայացնել մեղադրանքը, որպեսզի բոլոր ասեկոսեները մեղադրանքի շուրջ կարողանանք փաստով հաստատել կամ հերքել»:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԲԻԶՆԵՍՄԵ՞Ն, ԹԵ՞ ԿՈՌՈՒՊՑԻԱ

«Ընդհանուր առմամբ, ապօրինի գույքի բռնագանձման վարույթի շրջանակում 90-ից ավելի հայցեր են ներկայացված, հայցագինը գերազանցում է 510 միլիարդը, սակայն սա դեռ վերջնական գումարը չէ: Հայցերի քանակն ու թիվը աճելու է, քանի որ ուսումնասիրությունը տեւում է առավելագույնը երեք տարի»,- Հանրային հեռուստաընկերության եթերում հայտնել է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը:

«Ուսումնասիրությունը սկսվում է, եթե առկա են երկու հիմքերը. դրանք են՝ կոռուպցիոն հանցագործությունների մեջ մեղադրանքը կամ օպերատիվ մարմնի հայտնած տեղեկությունը: Եթե այս երկու հիմքերը առկա են, վարչությունը սկսում է ուսումնասիրությունը եւ ունի առավելագույնը երեք տարի կամ հայց ներկայացնելու, կամ կարճելու: Առաջիկա տարիների ընթացքում հայցերի քանակը կաճի, քանի որ, օրինակ, 2021 թվականի ուսումնասիրությունների վերջնաժամկետը 2024 թիվն է: Կարծում եմ՝ հայցագրերի թիվն այնպիսին է, որ կարելի է աղմկահարույց մեկնաբանել»:

Ըստ դատախազի՝ դրանց թվում են Քոչարյան եւ Խաչատրյան ընտանիքի գույքի վերաբերյալ գործերը, որոնք ձեռք են բերվել ոչ օրինական ճանապարհով:

«Հիմնական գործառությունները իրականացվել են Սեդրակ Քոչարյանի միջոցով, քանի որ, ըստ իրենց պնդման, նա այն անձն է, որ զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ: Հիմնական անհանգստությունն ու անվստահությունը, որ մեզ մոտ ձեւավորվել է, այն է, որ 19 տարեկանում անձը սկսել է զբաղվել եւ մեծ ծավալի գույքերի սեփականության նկատմամբ իրավունք է ունեցել»,- ասել է Վարդապետյանը:

Հաղորդավարի դիտարկմանը, թե Սեդրակ Քոչարյանը տաղանդավոր բիզնեսմեն է, Աննա Վարդապետյանը նկատել է. «Դռնբաց դատական քննությունը ցույց կտա՝ անձը տաղանդավոր բիզնեսմեն է, թե մենք գործ ունենք ապօրինի գույքի հետ: Թվերը մեծ են, բայց մի քանի խոշոր անշարժ գույքեր են, եւ չհիմնավորված ֆինանսական հոսքեր, որոնք կամ ծախսերի տեսքով են, կամ բանկային հաշիվների ձեւով»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 20-ից 21-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 62 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՉԿԱ

Տավուշի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողային հաշվեկշռի, կազմում են 110 665,6 հեկտար, որից վարելահող՝ 25 485,3 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 1981,8 հեկտար, այդ թվում՝ խաղողի այգիներ՝ 1195,3 հեկտար, պտղատու այգիներ՝ 786,5 հեկտար, խոտհարքներ՝ 9400,6 հեկտար, արոտավայրեր՝ 63 006 հեկտար,այլ՝ 10791,8 հեկտար: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել, թե 2023 թվականին Տավուշի մարզում որքան աշնանացան է արվել: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Համաձայն Իջեւանի, Նոյեմբերյանի եւ Բերդի համայնքապետարանների կողմից տրամադրված տեղեկատվությունների՝ օպերատիվ տվյալներով՝ 12.12.2023թ. դրությամբ մարզում կատարվել է 2550,2 հա աշնանացան, որից՝ ցորեն-1938,4հա, գարի-611,8հա: 2023թ. աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիր չի գործում»:

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ՝ ՁԱԽՈՂՎԱԾ

Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներում ընդհանուր առմամբ աշխատում են 1830 ուսուցիչ եւ ուսուցչի օգնական: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել՝հարցնելով՝ մինչ այժմ՝ ատեստավորման գործընթացը սկսվելուց հետո, Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ընդհանուր քանի ուսուցիչ է կամավոր ատեստավորվել, նրանցից քանիսը ինչ արդյունքներ է ունեցել: Մարզպետարանից պատասխանել են. « 2021-2023թթ. Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների 148 ուսուցիչ կամավոր ատեստավորվել է: Նրանցից 40-ը ստացել է 60-69, 54-ը՝70-79, 48-ը՝80-89, եւ 6-ը՝ 90-100 արդյունք»: Մարզպետ Ղալումյանը իր պատասխանում չի նշել, թե քանի ուսուցիչ կամավոր ատեստավորումից 60-ից ցածր միավոր է ստացել: Մարզպետն այդ թիվը չի նշել, որպեսզի չբացահայտվի կամավոր ատեստավորումից «կտրվածների» մեծ քանակը, այդ գործընթացի ձախողումը:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԳՅՈՒՂԸ՝ ՆՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՎ

Հայաստանում գյուղ կա՞, որ ունենա գլխավոր հատակագիծ: Նիկոլ Փաշինյանի հոր հայրենի գյուղը՝ Իջեւան համայնքի Ենոքավանը, շնորհիվ պետական ֆինանսավորման, առաջիկայում կունենա գլխավոր հատակագիծ: 2023թ. հուլիսի 7-ին Տավուշի մարզպետարանում տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել է Ենոքավանի գլխավոր հատակագիծը: Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ Ենոքավանի գլխավոր հատակագծի պատվիրատուն հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, նախագծող կազմակերպությունը «Արխիոն» ՍՊԸ-ն է, նախագծման աշխատանքի արժեքը 5,5 միլիոն դրամ է: Ենոքավանի գլխավոր հատակագծի նախագծային աշխատանքները կավարտվեն 2024 թվականի մարտ ամսին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԿՏՐՎԻ

Կառավարության երեկվա նիստում գործադիրը հաստատել է ՀՀ նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում մինչեւ 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընդգրկված Լեռնային Ղարաբաղի սովորողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը. այս մասին հայտնում են ԿԳՄՆ-ից:

Հարցը զեկուցել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը՝նշելով, որ որոշումը վերաբերում է ՀՀ ուսումնական հաստատություններում սովորող Լեռնային Ղարաբաղի այն ուսանողներին, որոնց ընտանիքները սեպտեմբերի 19-ից հետո բռնի տեղահանվել են:

«Ուսանողների մի խմբի ուսման վարձերը վճարել էին նրանց ընտանիքները, որոնք այժմ հայտնի պատճառներով զրկված են այդ աջակցությունը ցուցաբերելու հնարավորությունից: Մյուս խմբի ուսման վարձը վճարվել էր ԼՂ կառավարության կողմից, ինչը եւս այս պահին հնարավոր չէ շարունակել: Այս երկու խմբերի պարագայում կրթության իրավունքի վերականգնման խնդիր չունենք, քանի նրանք ի սկզբանե եղել են ՀՀ ուսանողներ, սակայն առկա էր ֆինանսական աջակցության կարիք»,- ասել է նախարարը՝ հավելելով, որ, կառավարության որոշմամբ, վերը նշված խմբերի ուսանողների խնդրին տրվում է լուծում:

Հաստատված կարգով՝ ուսման վարձի փոխհատուցում կտրամադրվի 2023-2024 ուսումնական տարվա համար հետեւյալ չափերով եւ պայմաններով՝

1) 1-ին կիսամյակի համար տվյալ կիսամյակի ուսման վարձի 100 տոկոսի չափով՝ անկախ նախորդ ուսումնական տարվա արդյունքում ձեւավորված միջին որակական գնահատականից (ՄՈԳ),

2) 2-րդ կիսամյակի համար տվյալ կիսամյակի ուսման վարձի 100 տոկոսի չափով՝ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքում ՄՈԳ-ի 65.00 տոկոսը հաղթահարելու դեպքում, իսկ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողի պարագայում՝ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքում 50 տոկոսից ոչ պակաս՝ «գերազանց» եւ (կամ) «լավ» գնահատականներ ունենալու դեպքում:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝նոր որոշման շահառուները մոտ 935 ուսանողներ են, որոնցից 860-ը բուհական եւ հետբուհական կրթության համակարգից են, 75-ը՝ՄԿՈՒ ոլորտից: Այս որոշմամբ փոխհատուցվելու է 2023/24 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձը, ինչը կազմում է մոտավորապես 264 միլիոն դրամ: Գումարը նվիրաբերության կարգով կհատկացվի այն ուսհաստատություններին, որոնցում սովորում են նշյալ խմբի ուսանողները:

Նախարարը նաեւ հիշեցրել է, որ կառավարության հոկտեմբերի 12-ի որոշմամբ հաստատվել էր սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ ԼՂ-ում նախնական եւ միջին, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացրած ուսումնական հաստատությունների առկա եւ հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը: Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ այս պահի դրությամբ այդ խմբի ավելի քան 1800 ուսանող սովորում է ՀՀ բուհերում, իսկ ավելի քան 1100 ուսանող՝ քոլեջներում եւ ուսումնարաններում:

Կառավարության նիստի ընթացքում ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը հայտնել է, որ 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձը արդեն իսկ վճարած եւ այս աջակցության ծրագրի շահառու դարձած ուսանողների գումարը պետք է վերադարձվի:

Նշենք, որ ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում սովորողներին տրամադրվելու է ուսման վարձի՝ սույն որոշմամբ նախատեսված փոխհատուցում, կհրապարակվի առաջիկայում:

ՆՈՐ ԿԱՐԳ

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՎՍ ԿԱՏԵՍՏԱՎՈՐՎԵՆ

Կառավարությունը հաստատեց գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական ոլորտական կազմակերպություններում գիտական եւ ճարտարագիտատեխնիկական դպրոցները եւ դրանց գնահատման նվազագույն չափանիշները:

Կառավարության նիստի ընթացքում նախագիծը ներկայացրեց ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

«Ինչպես գիտեք, էապես ավելացել է գիտության ոլորտի ֆինանսավորումը, եւ առաջնահերթ խնդիր է նաեւ դրա որակի եւ արդյունավետության մասին մտածելը: Ֆինանսավորման ավելացման կարեւոր ուղղություն է գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացումը, որը մեկնարկել է 2022 թվականի հունվարի 1-ից, եւ դրա արդյունքում արդեն իսկ էական բարձրացում է գրանցվել՝ միջինում 174 տոկոսով 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ: Ընդ որում, վարձատրության բարձրացումը իրականացվում է ատեստավորման գործընթացի արդյունքում, որի նպատակն է գնահատել գիտական աշխատողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը եւ նրա ստացած գիտական արդյունքները, ինչպես նաեւ պարզել գիտական աշխատողի մասնագիտական որակի համապատասխանությունն իր զբաղեցրած պաշտոնին: Սակայն, ամբողջ խնդիրն այն է, որ ատեստավորման գործընթացը կարգավորվում էր 2001 թվականի կառավարության որոշմամբ, որը բավական հնացած էր եւ լիարժեքորեն չէր համապատասխանում ոլորտում իրականացվող բարեփոխումներին եւ ոլորտի աշխատակիցներից պետության ակնկալիքներին, ինչպես նաեւ չէր սահմանում կատարողականի նվազագույն քանակական չափանիշներ»,- ասաց նա:

Ըստ նախարարի՝ ներկայացվող նախագծով կառավարությունը կարող է հաստատել գիտական պաշտոնների տարակարգերը, դրանցից յուրաքանչյուրի համար արդյունավետության նվազագույն պահանջները, որոնք խարսխված են գիտական կադրերի պատրաստման մեջ գիտնականների ներգրավվածության, միջազգային հեղինակավոր պարբերականներում հրապարակումների որակի եւ քանակի, միջազգային դրամաշնորհային ծրագրերում ներգրավվածության եւ դրանց ղեկավարման պայմանների վրա. «Այսպիսով, դրանք ամբողջությամբ համահունչ են, մի կողմից, գիտության եւ բուհական կրթության համադրման քաղաքականությանը, մյուս կողմից՝ գիտության միջազգայնացման քաղաքականությանը, ինչպես նաեւ գիտության ոլորտում պետության եւ մասնավոր գործակցության խթանմանը, որովհետեւ այդ դրամաշնորհային ծրագրերում ներգրավվածության պահանջներից է նաեւ, որ այնտեղ չլինի միայն ֆինանսավորման պետության մասնաբաժին, այլ նաեւ հաշվի առնվի այլ ֆինանսավորման առկայությունը: Արդյունավետության պահանջներից բացի, կարգով նկարագրվում են նաեւ տարակարգի համար պաշտոնեական պարտականությունները՝ այդպիսով նաեւ սահմանելով ակնկալիքների այն շրջանակը, որը պետությունը եւ հասարակությունը կարող է ունենալ գիտական պաշտոնների յուրաքանչյուր տարակարգից»:

Նրա խոսքով՝ գիտական աշխատողների արդյունավետության նոր պայմանների հաստատումը հիմք է դառնալու 2024 թվականին համապետական ատեստավորման ծրագրի իրականացման հաստատման համար. «Ամբողջական ատեստավորումը այս մեխանիզմով կիրականացվի 2026 թվականին, որովհետեւ նախորդ ատեստավորումը 2021 թվականին է եղել, եւ հնգամյա շրջափուլը կավարտվի այդ ժամկետում: Դա արդեն կհանդիսանա հիմք արդյունավետության բարձր պահանջներին համապատասխանող գիտական աշխատողների տարակարգման եւ արդեն իսկ այդ ֆինանսավորման վերանայման համար»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Նոր-Նորք, Մոլդովական փողոց, 60 շենք, 52 հասցեում գտնվող 75,32 ք.մ. բնակարան եւ 3,72 քմ ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 31900000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 08.01.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 08.02.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԾԽԱԽՈՏԻ ԱՊՕՐԻՆԻ ԻՐԱՑՈՒՄ

ՊԵԿ-ը բացահայտել է առանց անվանման, առանց նույնականացման տվյալների եւ ակցիզային դրոշմանիշերով չդրոշմավորված ծխախոտի իրացման խոշոր դեպքեր:

ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը 2023 թվականի ընթացքում մշտապես միջոցառումներ է իրականացրել՝ առանց ակցիզային դրոշմանիշի ծխախոտի իրացման դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության ու ՊԵԿ այլ ստորաբաժանումների կողմից համատեղ ձեռնարկված միջոցառումների արդյունքում 2023 թվականի ընթացքում հայտնաբերվել եւ առգրավվել է օդային եւ ցամաքային ճանապարհներով, անօրինական եղանակով Հայաստանի Հանրապետությունից արտահանվող շուրջ 1,5 միլիոն տուփ առանց ակցիզային դրոշմանիշի ծխախոտ: Նշված դեպքերի առթիվ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների դեմ պայքարի գլխավոր վարչությունում նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնց շրջանակում քրեական վարույթների համար նշանակություն ունեցող բազմաթիվ վայրերում դատարանի որոշումներով կատարվել են խուզարկություններ: Միաժամանակ, ՀՀ քննչական կոմիտեիեւ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների իրականացրած վարույթային եւ ապացուցողական ծավալուն գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների հիմքով վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ առանց ակցիզային դրոշմանիշի ծխախոտ արտադրած ընկերության սեփականատիրոջը եւ ընկերության տնօրենի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար, որոնք բավարարվել են:

Միեւնույն ժամանակ, հետաքննության եւ օպերատիվ հետախուզության ու ներքին անվտանգության վարչություններ օպերատիվ տեղեկություններ էին ստացվել այն մասին, որ ծխախոտ արտադրողները սկսել են առանց նշագրման, սպիտակ տուփերով ծխախոտ վաճառել: Ստացված տվյալներն իրացնելու նպատակով ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության ու ներքին անվտանգության վարչությունների կողմից մշակվել, ձեռնարկվել եւ իրականացվել են համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց ընթացքում ծածկագրված եղանակով կատարվել են հսկիչ գնումներ: Արդյունքում կատարված հսկիչ գնումներով արձանագրվել են առանց անվանման, առանց որեւէ նույնականացման տվյալների, ակցիզային դրոշմանիշերով չդրոշմավորված ծխախոտների շուրջ 5170 տուփի վաճառքի դեպքեր, բացի այդ, վաճառողների մոտից հայտնաբերվել են շուրջ 38,870 տուփ չդրոշմավորված եւ առանց որեւէ նույնականացման տվյալների ծխախոտ: Հսկիչ գնումներին զուգահեռ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ են իրականացվել ծխախոտի արտադրությամբ զբաղվող ընկերությունների արտադրամասերում եւ պահեստային տարածքներում, որտեղից հայտնաբերվել են առանց անվանման, առանց որեւէ նույնականացման տվյալների, ակցիզային դրոշմանիշերով չդրոշմավորված ծխախոտներ եւ դրանց արտադրության հետքեր: Հաշվի առնելով, որ ձեռնարկված արդյունավետ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով հաստատվել է, որ տվյալ ընկերությունները զբաղվել են առանց անվանման, առանց որեւէ նույնականացման տվյալների, ակցիզային դրոշմանիշերով չդրոշմավորված ծխախոտների արտադրությամբ եւ վաճառքով՝ ձեռք բերված ելակետային տվյալների հիման վրա՝ կատարվել են պետությանը պատճառված վնասի նախնական հաշվարկներ, որոնց հիմքով՝ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների դեմ պայքարի գլխավոր վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ներկայումս օպերատիվ-հետախուզական միջոցառումները եւ վարույթային գործողությունները շարունակվում են՝ հանցավոր շղթաներում ներգրավված բոլոր անձանց հայտնաբերելու եւ նրանց արարքներին քրեաիրավական գնահատական տալու նպատակով:

Պետական եկամուտների կոմիտեն ծխախոտ արտադրողներին եւ վաճառողներին հորդորում է չարտադրել եւ չվաճառել առանց ակցիզային դրոշմանիշերի, առանց հսկիչ նշանների, ինչպես նաեւ առանց անվանման, առանց որեւէ նույնականացման տվյալների եւ ակցիզային դրոշմանիշերով չդրոշմավորված ծխախոտներ: Պետական եկամուտների կոմիտեն բոլոր նմանատիպ արատավոր երեւույթները բացահայտելու նպատակով շարունակելու է օգտագործել իր ողջ գործիքակազմը:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

«ԷՔՍՊՐԵՍ» ՎԱՐԿ՝ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ

«ՎՏԲ-Հայաստան» բանկի փոքր բիզնեսի հաճախորդներն այսուհետ կարող են ստանալ «էքսպրես» վարկ ազգային արժույթով: Միջոցները հասանելի են ընթացիկ գործունեություն իրականացնելու, գործող պարտավորությունները մարելու կամ արտադրությունն ընդլայնելու համար: Վարկի առավելագույն գումարը կազմում է 20 մլն ՀՀ դրամ:

«Էքսպրես» վարկը տրամադրվում է առանց գրավի կամ մասնակի գրավով՝ 12-ից 60 ամիս մարման ժամկետով:

Հաճախորդը վարկավորման վերաբերյալ որոշում է ստանում 2 աշխատանքային օրվա ընթացքում:

«Փոքր բիզնեսը կարեւոր ոլորտ է երկրի տնտեսության զարգացման համար: Այս հատվածն ամենաարագն է հարմարվում տնտեսական փոփոխություններին եւ չի խուսափում ներգրավել վարկային ֆինանսավորում, այդ թվում՝ ներդրումային նպատակներով: Այսօր մենք սպասարկում ենք փոքր բիզնեսի սեգմենտում գործունեություն իրականացնող մոտ 11 հազար ընկերությունների: Մեր նոր պրոդուկտը թույլ կտա վերջիններիս երկու օրում առանց լրացուցիչ փաստաթղթերի ստանալ վարկային միջոցներ, իսկ դրույքաչափը մրցունակ է շուկայում: Սա հարմար եւ ունիվերսալ լուծում է բիզնեսին աջակցելու եւ այն զարգացնելու համար»,- մեկնաբանում է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի տեղակալ Եվգենիյ Մոտովիլովը:

Տվյալ պրոդուկտի շրջանակներում միջոցները հասանելի են 500 հազ. ՀՀ դրամից մինչեւ 20 միլիոն ՀՀ դրամ:

Տարեկան տոկոսադրույքը կազմում է 10%-ից մինչեւ 17%՝ կախված վարկի ժամկետից, չափից եւ գրավի արժեքից:

Վարկի փաստացի տոկոսադրույքը կազմում է տարեկան 12.7%-ից մինչեւ 21.92%:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԱՐՁԱԿԱԳԻՐ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՇՆՈՐՀԻՎ

«Կինը» ժողովածուն Անուշ Վարդանյանի առաջին արձակ գիրքն է, որի հերոսները մեր ժամանակակիցներն են: Գրքում ընդգրկված վիպակներից երկուսի գլխավոր հերոսը կինն է. նա ներկայացվում է նոր ու վառ գույներով, իսկ «Տղան» վիպակում տղամարդն է, որը բուռն իրադարձությունների եւ բարդ իրականության մեջ իր տեղն է փնտրում:



Գրքի շնորհանդեսը, որին ներկա էին Վարդանյանի գործընկերներն ու ընկերները, տեղի ունեցավ դեկտեմբերի 21-ին Հայաստանի գրողների միությունում:

Լրատվամիջոցների հետ զրույցում Անուշ Վարդանյանն ասաց, որ մանկական արձակի ու բանաստեղծությունների ավելի քան տասը ժողովածու ունի, սակայն արձակագիր է դարձել համացանցի շնորհիվ: «Արձակ գործերից մի քանի դրվագ հրապարակեցի, մարդիկ արձագանքեցին՝ ասելով, որ հետաքրքիր է, ու պահանջեցին շարունակությունը: Արդեն չորրորդ վիպակն եմ գրում»,-նշեց նա:

Վարդանյանը հավաստիացրեց, որ արձակ ժանրում ավելի հեշտ է ստեղծագործում, քան բանաստեղծական: «Կարծում եմ՝ արձակ գրում են պոետները՝ Գյոթեն, Չարենցը եւ այլք: Չարենցի «Երկիր Նաիրի»-ն համարում եմ ամենաբարձր արձակը, բայց արձակագիրները ոչ միշտ են պոեզիա գրում»,-ընդգծեց Վարդանյանը:

Խոսելով գրքի վերնագրի մասին՝ նա ասաց՝ վիպակների կին հերոսը չունի անուն: Նա կարող է ապրել Ֆրանսիայում, Ռուսաստանում, Գերմանիայում եւ այլուր, սակայն ամեն տեղ կնոջ հոգեկան ապրումներն ու զգացմունքները նույնն են: «Երբ կարդաք վիպակները, կտեսնեք, որ դրանք ձեր հոգու հետ խոսում են: Փորձել եմ կնոջ հավաքական կերպար ստեղծել, ինչն ինձ համար շատ կարեւոր էր»,-նշում է Անուշ Վարդանյանը:

Նա հույս ունի հաջորդ տարի ընթերցողների դատին հանձնել իր չորրորդ վիպակը, որը կկոչվի «Չղջիկ մականունով հետախույզը»: Այն դետեկտիվ ժանրի է, քանի որ հեղինակն այն պաշտում է:

Գրականագետ Ավիկ Իսահակյանը, որն Անուշ Վարդանյանի դասախոսն է եղել, առաջիններից է, որ ընթերցել է գիրքը:

Նրա խոսքով՝ Անուշ Վարդանյանի բանաստեղծություններն ու արձակը ստեղծում են նրա գրական դիմանկարը, որը հիմքում ժամանակակից մարդու աշխարհընկալումն է: «Նա այնքան լավ է պատկերում ամեն բան, որ կարծես պատրաստի կինոսցենար լինի: Ընթերցողին հաճելի ճամփորդություն է սպասվում Փարիզ քաղաքում, որը կախարդանք ունի ու աշխարհի ամենահիրապուրիչ քաղաքներից է: Ժամանակները փոխվում են. այսօր նույն Ֆրանսիայում շատ են փախստականները, կարծես ամեն բան խառնվել է, սակայն, ինչպես ասել է Հեմինգուեյը, Փարիզը տոն է, որը միշտ քեզ հետ է: Գրքում եւ՛ Փարիզն է, եւ՛ հերոսուհու ներքին աշխարհը»,- նշեց Իսահակյանը:

Գրող, Հայաստանի գրողների միության քարտուղար Նորիկ Գասպարյանի համոզմամբ՝ տղամարդ գրողները վերջերս շատ են կաշկանդվել, իսկ կանայք ավելի համարձակ են ու ասում են այն, ինչ ցանկանում են: Հենց այդպես է վարվել նաեւ Անուշ Վարդանյանը: «Պատերազմի մեջ գտնվող գրողը, եթե հայրենասիրության թեմայից դուրս որեւէ ստեղծագործություն է գրում, հասարակությունը կարծես չի ընդունում ու սկսում է ժխտել նրան: Ես այսօր չեմ կարողանում ասել այն, ինչ մտածում եմ, ու սա հայ գրականության դժբախտությունն է: Գնալով գրականությունը դառնում է վրեժի, սգի, ողբի գրականություն, իսկ Վարդանյանը հաղթահարել է դա»,-ընդգծեց Գասպարյանը:

Գրքի խմբագիրն ու գծանկարների հեղինակն Էդվարդ Միլիտոնյանն է: Այն լույս է ընծայել «Ծիծեռնակ» հրատարակչությունը:

Անուշ Վարդանյանը ծնվել է 1955 թվականին Երեւանում: Ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է Հայաստանի ազգային գրադարանի «Հիշարժան տարեթվեր» ամսագրում: Այժմ «Ծիծեռնակ» մանկական ամսագրի գլխավոր խմբագիրն է:

Վարդանյանը մանկական ստեղծագործությունների հեղինակ է: 2009 թվականին «Վերջին ծխնելույզ մաքրողի հեքիաթը» գրքի համար արժանացել է ՀԳՄ Վախթանգ Անանյանի անվան ամենամյա մանկապատանեկան գրականության մրցանակի:

2018 թվին «Շարժման արեւը» բանաստեղծությունների ժողովածուի համար արժանացել է «Հրանտ Մանուշակ Սիմոնյաններ»-ի մրցանակին: Անուշ Վարդանյանն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալի եւ «Ոսկե մեդալի»:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿԸ՝ ԵՐԳՉԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դեկտեմբերի 17-ին Երեւանում կայացավ «Mix fight 54» MMA մարզաձեւի խոշոր միջազգային մրցաշարը, որտեղ սպորտային կարատեի աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, Հայաստանի կարատեի միության հիմնադիր Կամո Ունանյանը մենամարտեց ռուս մարզիկ Ալեքսեյ Նովիկովի հետ:

Ռուս մրցակիցը թեպետ MMA-ի տարբեր մարտերում ուներ հաղթանակներ, սակայն Կամո Ունանյանի հետ մարտն ավարտվեց հենց առաջին ռաունդում: Կամոն նոկաուտի ենթարկեց ռուս մրցակցին ու փայլուն հաղթանակ տանելով MMA-ում՝ գրանցեց այս տարվա իր 5-րդ հաղթանակը:

Մարտի ավարտին Կամո Ունանյանը հայտարարեց, որ այս հաղթանակը նվիրում է իր ընկեր, սիրված երգիչ Արա Մարտիրոսյանի հիշատակին, որն օրերս անժամանակ հեռացավ կյանքից:

Հիշեցնենք, որ MMA մարձաձեւում սա Կամո Ունանյանի 5-րդ գերազանց հաղթանակն է, որից 4-ը՝ նոկաուտով: Նա MMA մարզաձեւով սկսել է զբաղվել 2023 թվականից եւ արդեն գրանցել է 5 հաղթանակ եւ ոչ մի պարտություն: MMA-ում նրա դեբյուտային մենամարտը տեղի ունեցավ այս տարվա մարտի 26-ին Հայաստանում, որի ժամանակ Ունանյանը մրցեց ռուս մարզիկ Դանիլ Օլեյնիկի հետ եւ ջախջախիչ հաղթանակ տարավ: Չորրորդ հաղթանակը գրանցեց սեպտեմբերի 3-ին ուզբեկ մարզիկ Ալիմժոն Շադմանովի նկատմամբ: Մարտը ընդամենը տեւեց 2 րոպե 58 վայրկյան. Կամո Ունանյանը հենց առաջին ռաունդում նոկաուտի ենթարկեց ուզբեկ մրցակցին:

ԴԵՄ ԵՆ ՈՐՈՇՄԱՆԸ

ՉԼ-ի «4-ի եզրափակիչ» են անցել իսպանական «Բարսելոնա»-ն եւ «Պալմա Ֆուտզալ»-ը, պորտուգալական «Սպորտինգ»-ը եւ «Բենֆիկա»-ն:

Sport.es-ը հայտնում է, որ «Բարսելոնա»-ն դժգոհ է մրցաշարը Երեւանում անցկացնելու ՈՒԵՖԱ-ի որոշմամբ եւ իր առարկություններով դիմելու է կառույցին: Իրենց բողոքը կհայտնեն նաեւ պորտուգալական թիմերը, որոնք, չնայած ունեցած տարաձայնություններին, այդ հարցի շուրջ միասնական կգործեն:

Իսպանական կայքը գրում է, որ այդպիսով խոչընդոտ է ստեղծվում, որպեսզի ակումբների երկրպագուները կարողանան ներկա գտնվել հանդիպումներին: Եզրափակչի մասնակիցներից ոչ մեկը չի հասկանում, թե ինչու պետք է հանդիպումները լինեն մեկուսացած. նրանք միեւնույն մարզահամալիրում 4 օրում 6 հանդիպում կանցկացնեն:

«Եվ այս անհեթեթությանը վերջ դնելու համար պետք է նշել, որ մի քանի ամիս առաջ ՈՒԵՖԱ-ն պատժամիջոցներ է կիրառել Հայաստանի նկատմամբ՝ լեգիոներների հետ կապված կանոնները խախտելու համար: Նախկինում ՈՒԵՖԱ-ն թույլ է տվել Հայաստանին ու Վրաստանին անցնել Աշխարհի առաջնության որակավորման փուլը՝ ունենալով 10 բրազիլացի խաղացող»,- ընդգծել է sport.es-ը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեւ նշված շարժական գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 18.01.2024 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 3,830,672 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 3,874,205 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝ կարմիր, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 3,658,971 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի – նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (էլ. Փոստ՝ makar@bankruptcy.am)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

● *Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում դեկտեմբերի 26-ին տեղի կունենա «Մոխրոտը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ:*

Քնար Մանուկյան

Բարով գաս, 2024, մեզ հեռու պահես փորձություններից: 2024 թվական, գալդ այնքան լի լինի, որ վերադարձնենք մեր կորցրած հայրենիքը, մեր հենասյունը, մեր դարպասը՝ Արցախը: Խոնարհվում ու ներողություն եմ խնդրում հայրենիքի համար զոհված մեր հերոս տղաների առաջ: Խոնարհվում եմ նրանց հերոս մայրերի, բալիկների, կանանց առջեւ: 2024, գալդ թող զորեղ լինի, որ խաղաղ, հզոր, անվտանգ ու հաղթանակած հայրենիքը երազանք չթվա:

Սոնա Գրիգորյան

2024 թվականը պետք է լինի խաղաղության, առողջության, մեր երկիրը իսկապես հզորացնելու տարի: Յուրաքանչյուրիս պարտքն է՝ մեր ամենօրյա աշխատանքով մեր երկիրը հանենք այն անդունդից, որում հայտնվել է: Թող իրականան բոլորի նվիրական երազանքները:

Քրիստինա Մուշեղյան

Թող որ 2024թ-ը լինի խաղաղության ու բարօրության տարի: Անցյալում թողնելով հիասթափություններն ու կորուստները՝2024թ.-ին վերագտնենք հայրենիքը հզորացնելու եւ առաջ շարժվելու մեր բանաձեւը:
Շնորհավոր
Նոր տարի:

Հայկ Ավանեսյան

Շնորհավո՛ր Նոր Տարի: Թող գալիք տարվա յուրաքանչյուր ամիս լինի պայծառ ու անմոռանալի: Թող հրաշքները տեղի ունենան ավելի հաճախ, քան մենք երազում էինք: Թող իրադարձությունները լինեն նշանակալից եւ գեղեցիկ, իսկ կյանքը՝ բարեկեցիկ եւ երջանիկ:

Էմմա Միքայելյան

Հույսի եւ լույսի իմ Հայաստան, գալիք տարում քո եւ մեր առաջ թող բացվեն բոլոր այն դռները, որոնք փակվեցին 2023-ին: Լցվենք սիրով եւ ջանանք անել լավագույնը՝ի նպաստ եւ հանուն հայրենիքի, հանուն Արցախի, հանուն մեր ապագա սերունդների: Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Հովսեփ Հովսեփյան

Թող գալիք տարվա յուրաքանչյուր իրադարձություն լինի նշանակալից եւ գեղեցիկ, իսկ կյանքը՝ բարեկեցիկ եւ երջանիկ:

Լիանա Խաչատրյան

Թող 2024 թվականը լինի խաղաղության տարի, կանաչ վիշապը մեզ լինի հովանավոր բոլոր փորձություններին դիմագրավելու համար: Թերթի՛ր մութ էջերդ, Հայաստան, ժամանակն է ամրագրել պատմությունդ հաղթանակներով:

Մարիամ Դանիելյան

Թող խաղաղությունն այս տարի քաղաքական կունյուկտուրայից իջնի հումանիզմի դաշտ, եւ կենտրոնում լինի Մարդը: Շնորհավոր Ամանոր:

Նանիկ Աղասյան

Անկախ ամեն ինչից՝ Ամանորին բոլորս էլ ունենում ենք մեր երազանքներն ու ցանկությունները եւ մեծ հույսով սպասում, որ այն անպայման կիրականանա եկող տարում: Ես էլ, իհարկե, այն ունեմ. թող եկող տարում օրացույցն իր հետ շրջի ու ետեւում թողնի բոլոր վիրավորանքներն ու տխրությունները, իսկ նոր տարին լինի իմաստության, վերելքների ու բարության տարի: Իմ երազանքն էլ չեմ ասի գուցե չիրականանա...

Ոսկան Սարգսյան

Հայաստանի ժողովրդին եւ աշխարհի հայերին մաղթում եմ խաղաղություն եւ առողջություն: Թող Նոր տարին բարեբախտ լինի բազմաչարչար Հայաստանի համար:

Ալվարդ Բաղդասարյան

Շնորհավորում եմ բոլորիս գալիք 2024 թվականը: Ցանկանում եմ անկորուստ, հաջողություններով լի տարի լինի: Թող բոլորս ապրենք խաղաղ ու կապույտ երկնքի տակ, սահմանին իսպառ դադարեն կրակոցները: Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Ալվարդ Կոշկակարյան

Կանաչ վիշապի տարին թող անվնաս ջերմություն, ուժ եւ սխալներն ընդունելու ու հաղթանակի հավատով առաջ շարժվելու ժամանակներ բերի: Լուսավո՛ր տարի բոլորիս:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.12.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*